



«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա»

ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահ

Անելկա Գրիգորյան

«27» հունվարի 2017թ.

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա

Ռազմավարական ծրագիր 2017-2021թթ.

Ներածություն

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան հիմնադրվել է 1945թ. որպես Երևանի գեղարվեստի ինստիտուտ: Դա աննախադեպ երևույթ էր հայ բազմադարյան մշակույթի պատմության մեջ, քանի որ երիտասարդներին հնարավորություն տրվեց ստանալ բարձրագույն մասնագիտական կրթության հայրենիքում՝ նպաստելով մշակույթի զարգացմանն ու տարածմանը Հայաստանում և արտերկրում: Ավելի քան 70 տարվա պատմության ընթացքում բուհը միավորել է դասախոսների ու ուսանողների՝ ձևավորելով սերունդներ, ովքեր կարողացել են պահպանել հայ մշակույթի լավագույն ավանդույթները, ստեղծել մնայուն արժեքներ և ունենալ բացառիկ դեր հայ մշակույթի զարգացման գործում:

1994 թվականից գործելով որպես Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա (ԵԳՊԱ)՝ այն ձգտում է դառնալ բարձրորակ կրթությունն առաջարկող, ինչպես նաև ՀՀ-ի և տարածաշրջանի արվեստի առաջատար բուհ՝ ապահովելով իր դերն ու հեղինակությունը որպես մշակույթի զարգացման կրթօջախ:

ԵԳՊԱ-ն ունի երկու մասնաճյուղ Գյումրիում ու Դիլիջանում:

Այսօր ԵԳՊԱ-ն առաջարկում է բակալավրի և մագիստրոսի ութ մասնագիտության կրթական ծրագիր՝ գեղանկարչություն, քանդակագործություն, գրաֆիկա, արվեստի պատմություն, դիզայն, կիրառական արվեստ, հագուստի մոդելավորում և համակարգչային գրաֆիկա, ինչպես նաև իրականացնում է հետազոտողի կրթական ծրագիր: Այն, անմասն չմնալով բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխություններին, քայլեր է ձեռնարկում կրթական բարեփոխումներին ինտեգրվելու ուղղությամբ:

2012-2016թթ. Ռազմավարական ծրագրի արդյունքում իրականացնելով մի շարք կարևոր բարեփոխումներ ու գործընթացներ՝ ԵԳՊԱ-ն հասել է զգալի հաջողությունների ու արդյունքների, մասնավորապես՝

- վերանայվել է հաստատության կառավարման համակարգը՝ այդ թվում կառուցվածքը,
- մշակվել է որակի ապահովման քաղաքականությունը և ձեռնարկը,
- իրականացվել է ընթացակարգերի և մի շարք հիմնարար փաստաթղթերի մշակում/վերանայում՝ հատկապես անդրադառնալով ընդունելության, ուսանողների գնահատման, շարժունության, կրեդիտների կուտակման և փոխանակման խնդիրներին,
- մշակվել և բարելավվել է մասնագիտության կրթական ծրագրերի վերանայման քաղաքականությունը և գործիքակազմը՝ հաշվի առնելով տարբեր կրթական մակարդակների համար ուսումնառության վերջնարդյունքերը և Որակավորումների ազգային շրջանակին դրանց համապատասխանության պահանջները,
- վերանայվել են բակալավրի և մագիստրոսի մասնագիտության կրթական ծրագրերը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը միջազգային չափանիշներին,
- վերանայվել է հետազոտողի կրթական ծրագիրը,
- իրականացվել է նյութատեխնիկական բազայի համալրում,
- իրականացվել են բուհի միջազգայնացմանը նպաստող մի շարք գործընթացներ դրամաշնորհային ծրագրերին միանալու և փորձի փոխանակման միջոցով:

Այդպիսով՝ ԵԳՊԱ-ն, իր գորունեության վերջին 5 տարիների ընթացքում կատարելով զգալի ու նկատելի փոփոխություններ կրթական գործընթացներում, շարունակում է իր ուրույն տեղն ունենալ արվեստի զարգացման մեջ:

Տեսական

ԵԳՊԱ-ն ձգտում է դառնալ առաջատար և միջազգային մրցունակ արվեստի բուհ և ազգային մշակույթի զարգացման ու տարածման կենտրոն:

Առաքելություն

ԵԳՊԱ առաքելությունն է.

- տրամադրել բարձրագույն կրթություն՝ իրականացնելով բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր արվեստի տեսության, կերպարվեստի, դեկորատիվ կիրառական արվեստի, դիզայնի և ճարտարապետության ոլորտներում՝ ակադեմիական և արդի մոտեցումների կիրառման, ստեղծագործական և կրթական գործընթացները հասարակական կարիքներին համապատասխանեցման միջոցով,
- նպաստել ազգային մշակույթի և տնտեսության զարգացմանը՝ պատրաստելով ազգային ու միջազգային մակարդակներում մրցունակ և բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ինչպես նաև հարատև կրթությանը պատրաստ քաղաքացիներ,
- զարգացնել արվեստի հետազոտությունը՝ նպաստելով գիտական մտքի և ազգային մշակույթի տարածմանը,
- ազգային արժեքների ձևավորմամբ նպաստել հասարակության համախմբմանը և գեղագիտական ճաշակի բարձրացմանը:

Արժեքներ

ԵԳՊԱ-ն արժևորում է համագործակցությունը հաստատության ներքին և արտաքին շահակիցների, ինչպես նաև հասարակության հետ՝ ծավալելով թափանցիկ և փոխադարձ վստահության վրա հիմնված գործունեություն:

Բուհը կարևորում է մշակութային բազմազանության և ստեղծարարության վրա հիմնված կրթական միջավայրը՝ ապահովելով իր գործունեության շարունակական բարելավումը և միջազգայնացումը:

Ռազմավարական ուղղություններ

1. Ուսումնառություն և դասավանդում
2. Հետազոտություն և զարգացում
3. Ծառայություն հասարակությանը

Ռազմավարական նպատակներ

1. Կառավարման համակարգի կատարելագործում
2. Արդի և մրցունակ կրթական ծրագրերի իրականացում
3. Հետազոտությունների իրականացում և դասավանդման հետ փոխկապակցում
4. Արտաքին կապերի ընդլայնում և շարժունության խթանում
5. Հասարակությանը մատուցվող ծառայությունների զարգացում
6. Որակի ապահովման համակարգի կատարելագործում և որակի մշակույթի ձևավորում

Նպատակ 1. Կառավարման համակարգի կատարելագործում

Խնդիրներ	Իրականացման մոտեցումներ
<p>1.1. Ներդնել էլեկտրոնային կառավարման համակարգ և զարգացնել տեղեկատվության կառավարումը:</p> <p>1.2. Բարելավել ստորաբաժանումների համագործակցությունը:</p> <p>1.3. Զարգացնել մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացները:</p> <p>1.4. Բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների տնօրինման արդյունավետությունը:</p>	<ul style="list-style-type: none"> • Կառավարման էլեկտրոնային համակարգի բարելավում որոշումների կայացման համար անհրաժեշտ ճշգրիտ և ժամանակին ստացվող տվյալների բազայի ստեղծման միջոցով: • Յուրաքանչյուր ստորաբաժանմանը իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ տվյալների հասանելիության ապահովում: • Փաստաթղթաշրջանառության համակարգի բարելավում: • ԵԳՊԱ կառավարման գործընթացում շահակիցների ներգրավածության խթանում: • Կառավարման տարբեր օղակների փոխկապակցվածության ապահովում, պարտականությունների և լիազորությունների հստակեցում: • Ստորաբաժանումների կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորման գործընթացների փոխկապակցվածության մեծացում: • Ռազմավարական ծրագրի իրականացման մշտադիտարկման համակարգի բարելավում: • Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության վերանայում և բարելավում: • Նյութական ռեսուրսների բաշխման համակարգի զարգացում:

	• Ֆինանսների տնօրինման քաղաքականության բարելավում:
--	--

Կատարողականի ցուցիչ	Արժեքը տվյալ պահին	Նպատակը
Ստորաբաժանումների կողմից եռամսյակային և տարեկան պլանների իրականացման միջին տոկոսը:	70%	85%
Իրականացված վերապատրաստումներին մասնակցած վարչական ներկայացուցիչների թիվը/հինգ տարվա ընթացքում/ :	61	150
Ֆինանսական և նյութական ռեսուրսների բաշխմամբ բավարարված ներքին շահակիցների տոկոսը:	43.2%	65%

Նպատակ 2. Արդի և մրցունակ կրթական ծրագրերի իրականացում

Խնդիրներ	Իրականացման մոտեցումներ
<p>2.1. Ապահովել կրթական ծրագրերի շարունակական բարելավումը և միջազգայնացումը՝ պահպանելով արժեքավոր ավանդույթները և ներմուծելով ժամանակակից մոտեցումներն ու պահանջները:</p> <p>2.2. Բարելավել կրթական միջավայրը՝ համապատասխանեցնելով այն արդյունավետ ուսումնառության արդի պահանջներին:</p> <p>2.3. Ապահովել դիմորդների հոսքի և ուսանողական համակազմի կայունությունը:</p> <p>2.4. Ներգրավել առաջատար մասնագետներ և ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ու մասնագիտական աճը:</p>	<ul style="list-style-type: none"> • Կրթական ծրագրերի վերանայում և համապատասխանեցում որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի պահանջներին՝ ապահովելով դասավանդման, ուսումնառության և գնահատման փոխկապակցվածությունը: • Պահանջարկ վայելող և ԵԳՊԱ առաքելությունից բխող նոր կրթական ծրագրերի մշակում և իրականացում: • Օտարերկրյա արվեստի բուհերի կողմից առաջարկվող կրթական ծրագրերի հետ ԵԳՊԱ կրթական ծրագրերի համադրելիության խթանում: • Ծրագրային հավատարմագրում: • Գործատուների և շրջանավարտների հետ համագործակցության զարգացում: • Բուհի և առաջարկվող կրթական ծրագրերի մասին տեղեկատվության տարածում, դիմորդների համար խորհրդատվությունների կազմակերպում: • Ուսումնական ռեսուրսների, ուսանողներին առաջարկվող կրթական և այլ ծառայությունների զարգացում: • Դասախոսական կազմի ձևավորման և մասնագիտական զարգացման քաղաքականության հստակեցում և բարելավում:

Կատարողականի ցուցիչ	Արժեքը տվյալ պահին	Նպատակը
ՀՀ դպրոցների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամբողջ թվից ԵԳՊԱ դիմած դիմորդների տոկոսը:	0.48%	0.58%
Մագիստրատուրա ընդունված ուսանողների թիվը /տարեկան կտրվածքով/:	28	50
Ավարտելուց հետո մեկ տարվա ընթացքում ըստ մասնագիտության աշխատանքի ընդունված շրջանավարտների տոկոսը:	46%	55%
Դուրս մնացած ուսումնառողների տոկոսը /միջինը հինգ տարվա ընթացքում/:	7.74%	6%
Ուսանող/դասախոս հարաբերությունը:	7.8/1	7/1
Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը:	51.8	50
Շահակիցների բավարարվածությունը կրթական ծրագրերով:	74.75%	86%
Իրականացված վերապատրաստումներին մասնակցած դասախոսական կազմի ներկայացուցիչների թիվը /հինգ տարվա ընթացքում/:	23	200
Հավատարմագրված ՄԿԾ-երի թիվը:	0	2

Նպատակ 3. Հետազոտությունների իրականացում և դասավանդման հետ փոխկապակցում

Խնդիրներ	Իրականացման մոտեցումներ
3.1. Սահմանել հետազոտության առաջնահերթությունները՝ խթանելով դրանց արդիականությունը:	<ul style="list-style-type: none"> • Դասախոսական կազմի ընտրության հարցում հետազոտական գործունեության կարևորում:
3.2. Խթանել դասախոսական կազմի հետազոտական գործունեությունը:	<ul style="list-style-type: none"> • Դասախոսների հետազոտական աշխատանքների համակարգում, նրանց հետազոտական գործունեությանը աջակցում:
3.3. Ապահովել հետազոտողի կրթական ծրագրի շարունակական բարելավումը՝ նպաստելով հետազոտության միջազգայնացմանը:	<ul style="list-style-type: none"> • Գիտական հետազոտությունների միջազգայնացմանը միտված նոր քաղաքականության մշակում:
3.4. Ապահովել կապը հետազոտության և դասավանդման միջև:	<ul style="list-style-type: none"> • Արդի պահանջներին համապատասխան հետազոտողի կրթական ծրագրի վերանայում:
3.5. Ամրապնդել ԵԳՊԱ-ի դերը արվեստի պատմության, կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի ոլորտների հետազոտության մեջ:	<ul style="list-style-type: none"> • Կրթական ծրագրերի հետազոտության բաղադրիչի զարգացում, հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության խթանում: • Հետազոտության և դասավանդման փոխկապակցման հստակ մեխանիզմների մշակում: • Արտաքին գործընկերների հետ համագործակցության զարգացում: • Իրականացվող հետազոտությունների արդյունքների տարածում:

Կատարողականի ցուցիչ	Արժեքը տվյալ պահին	Նպատակը
Գիտական և գիտամեթոդական հրատարակությունների տարեկան միջին թիվը:	87	100
Միջազգային ամսագրերում հրատարակությունների տարեկան միջին թիվը:	1	10
Գիտական կոչում և աստիճան ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի տոկոսը:	80%	85%
Հետազոտությանը հատկացվող միջին տարեկան բյուջե:	6.780.000 դր.	8.000.000 դր.
Իրականացվող հետազոտական ծրագրերի թիվը:	0	4
Հետազոտական կոնֆերանսների և քննարկումների տարեկան միջին թիվը:	17	22

Նպատակ 4. Արտաքին կապերի ընդլայնում և շարժունության խթանում

Խնդիրներ	Իրականացման մոտեցումներ
<p>4.1. Ակտիվացնել և ընդլայնել համագործակցությունը արտաքին գործընկերների հետ՝ ազգային և միջազգային մակարդակներում:</p> <p>4.2. Խթանել ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունությունը:</p> <p>4.3. Բարձրացնել բուհի գրավչությունը՝ օտարերկրյա ուսանողների ներգրավման նպատակով:</p>	<ul style="list-style-type: none"> • Արտաքին գործընկերների հետ համագործակցության զարգացում: • Արվեստի բուհերի միջազգային ասոցիացիաներին անդամակցում: • Արտաքին ռեսուրսների ներգրավում: • Միջազգային կոնֆերանսների, ցուցահանդեսների և այլ միջոցառումների կազմակերպում ու մասնակցության խթանում: • Օտարերկրյա ուսանողների միջավայր ինտեգրման և արդյունավետ ուսումնառության համար պայմանների զարգացում: • Օտարալեզու և համատեղ կրթական ծրագրերի մշակում և իրականացում

Կատարողականի ցուցիչ	Արժեքը տվյալ պահին	Նպատակը
Միջազգային կազմակերպությունների հետ գործող պայմանագրերի թիվը:	20	22
Շարժունությանը մասնակցած արտագնա ուսանողների և դասախոսների թիվը/հինգ տարվա ընթացքում/ :	30	50
Շարժունությանը մասնակցած ներգնա ուսանողների և դասախոսների թիվը /հինգ տարվա ընթացքում/:	5	10
Օտարերկրյա ուսանողների տոկոսը ուսանողների համակազմում:	5%	7%
Օտարերկրյա ուսանողների բավարարվածությունը տրամադրվող կրթությամբ:	61.2%	75%

Նպատակ 5. Հասարակությանը մատուցվող ծառայությունների զարգացում

Խնդիրներ	Իրականացման մոտեցումներ
<p>5.1. Ամրապնդել ակադեմիայի համբավը որպես ազգային մշակութային կենտրոն և արվեստի առաջատար բուն:</p> <p>5.2. Նպաստել ազգային մշակույթի զարգացմանը և հասարակության գեղագիտական դաստիարակությանը:</p> <p>5.3. Ակտիվացնել հասարակայնության հետ կապերը և ապահովել ԵԳՊԱ գործունեության թափանցիկությունը:</p>	<ul style="list-style-type: none"> • Հասարակությանը առաջարկվող կրթական ծրագրերի և այլ ծառայությունների մասին իրազեկում: • Հանրապետության մշակութային օջախների հետ համագործակցում: • Ուսանողների մոտ համամարդկային մշակութային արժեքների և հումանիստական գաղափարների արմատավորում: • Ուսանողներին շարունակական ինքնազարգացմանը և ստեղծագործական գործունեությանը նախապատրաստում: • Ազգային և միջազգային մակարդակներում մշակութային միջոցառումների կազմակերպում՝ ներգրավելով հանրության լայն շրջանակը: • Ամենամյա ավարտական աշխատանքների հրապարակային պաշտպանության միջոցով շահակիցների շրջանում կրթական ծրագրերի արդյունքների հասանելիության ապահովում: • ԵԳՊԱ գործունեության հրապարակայնության զարգացում՝ պաշտոնական կայքի բարելավման, տեղեկատվության տարածման և այլ միջոցներով:

Կատարողականի ցուցիչ	Արժեքը տվյալ պահին	Նպատակը
Կազմակերպված մշակութային միջոցառումների թիվը /հինգ տարվա ընթացքում/:	315	350
Միջազգային և հանրապետական ցուցահանդեսների ու մրցույթների մասնակիցների /հինգ տարվա ընթացքում/:	300	400
Ազգային վարկանիշավորման համակարգում զբաղեցրած տեղը արվեստի/բոլոր բուհերի շրջանում:	1/13	1/12
ԵԳՊԱ պաշտոնական կայքի և սոցիալական էջերի տարեկան այցելությունների միջին թիվը:	110000	150000

Նպատակ 6. Որակի մշակույթի տարածում և որակի ապահովման համակարգի կատարելագործում

Խնդիրներ	Իրականացման մոտեցումներ
<p>6.1. Ջարգացնել որակի ապահովման ներքին համակարգը:</p> <p>6.2. Ապահովել ԵԳՊԱ որակի ներքին համակարգի համադրելիությունը որակի արտաքին ապահովման պահանջներին:</p> <p>6.3. Ապահովել որակի ապահովման գործընթացների թափանցիկությունը և բարձրացնել շահակիցների տեղեկացվածության մակարդակը դրանց վերաբերյալ:</p>	<ul style="list-style-type: none"> • Որակի ապահովման ներքին համակարգի բարելավում՝ ապահովելով գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը: • Գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման մեխանիզմների բարելավում: • Գործընթացների մշտադիտարկման մեխանիզմների և գործիքների վերանայում, ինչպես նաև դրանց արդյունավետության գնահատում և բարելավում: • Որակի արտաքին գնահատման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծում: • Հաշվետվողականության մեխանիզմների բարելավում և շահակիցների շրջանում որակի ապահովման գործընթացների մասին իրազեկվածության բարձրացում:

Կատարողականի ցուցիչ	Արժեքը տվյալ պահին	Նպատակը
Որակի ապահովման գործընթացներում ներգրավված ուսանողների թիվը:	7	20
Որակի ապահովման գործընթացներում ներգրավված դասախոսների թիվը:	20	40
Որակի ապահովման գործընթացների մասին ներքին շահակիցների տեղեկացվածության մակարդակը:	40%	70%
Հավատարմագրման արդյունքում դուրս բերված և շտկված թերությունների տոկոսը:	0	90%